

վենետիկոյ ուլունք, զգեստեղէն, բամբակէ և կտաւէ լաթեր, կապուտակշալեր և դիպակներ: — Ապրուես և Պիքարիս ցեղերը, որ ներոսի և կարմիր ծովուն մէջ կը բնակին, կ'իջնան լանէ: Կը բերեն գերի, ուղտ, ակասիա ծառի խէժ¹: ածուխ՝ որ նոյն ծառին փայտէն կը շնին: կը տանին մետաղներ, գործիներ և ընդեղէն: Ասորւց կարաւանը կը բերէ մետաքս, ծխախոռ, օճառ. Հընդկաստանի, Պարսկաստանի, Դամասկոսի և Բերիոյ դիպակներ, Երուսաղէմէ և Բեթղէհէմէ մասունքներ և վարդարաններ: և կը տանի բրինձ, քաֆէ, գործածական բաներ և ստակ: Մաղրբակէն եկածը կը կարէ բովանդակ Բարբարոսաց Տը և կը բերէ ծածկոցներ, ճերմակ կտաւէ մեկնոցներ, Դունուղ շնուռած զլխարկներ, ջորի, ջայլեման փետուր, քրքում, վարդի եղ, և ուրիշ արժէք ունեցող նիւթեր: Սիւէզի և կարաւաններուն բերած վաճառքներն են Մօքայի քաֆէ, խէժի տեսակներ, ծխանելիք, մարզրիտ, ակունք, Հնդկաստանի բեհեղ, մետաքսեղէն, Քաշմիրի ցփսի և դիպակներ: զլխաւորները միայն յիշատակեցինք, զանց առնելով աննշանները: Ծովով Անատոլուէն, կոստանդնուպօլիսէն և Արշիպելագագոսի կղզիներէն մեծ քանակութեամբ փայտ կ'ամբարէ շնութեան և վառելու համար. Արշիպելագագոսէն հազարաւոր կենդինար չամիչ, ուսկից կը շինեն օղի. չոր պտուղ, տաճկի ծխախոռ, խէժ, ձէժ, օճառ, կուպր, ոտիջ գորգեր, հարուստ հիւսուածքներ, և մոլշտակներ: իսկ իր երկրէն կը դրկէ Մօքայի քաֆէ, բրինձ, ցորեան, և ուրիշ ընդեղէն, և մանչ ու աղջիկ գերիներ:

Վերջապէս համառօտելով խօսքերնիս, բոլոր այս նոր վաճառականութեն ընդհանուր զարգացման ողին կը ընանք ըսել որ մէկ մոտաց հանճարոյն գեղցիկ արդիւնքն է. այն նախնի Եփիպտուր որ իր ամենէն ծաղկեալ և բարգաւաճ ժամանակ անգամ հազիւ 14 մի-

լին մարդ կը մնուցանէր, և յետ ոտըն կոխ ըլլալու 'ի Հոռվմայեցոց, յԱրաբացոց, Թիվրմէններէն և ասոնցմէն առքն ալ Մէմուքներէն, մինչդեռ ոչ ոք անոր վերածնունդը յուսար, յուսաց Մէհէմմէտ Ալին, և զեգիպտոս նորոգելու ձեռք զարկաւ. փոխարքայ երկրին, բայց աւելի թագաւորաբար վարուեցաւ, մտածութիւնը ծափաձայն գովութեամբ հոչակուցցաւ, և անոր գործադութիւնը պսակուցցաւ իրեն և ապագայից օրերուն մէջ: Այս բանիս՝ կը ընանք ըսել իրաւացի ազգային պարծանօք մը, որ թէ Մէհէմմէտ Ալիի և թէ իր յաջորդաց՝ գործակից եղան ճարտար և նրբամիտ հայ պաշտօնեայք, ինչպէս Պողոս Պէյ Եուսուֆեան, Արթին Պէյ, և հիմակուան գործունեայ, զգօն և բարերար պաշտօնեայն Նուպար Փաշայ:

ԳԻՇԵՐ

Զեարդ վրամ, ու գիշեր, և ինձ բարբառդ աղուեր, Մինչ միայնիկ, եւ քո պէս խաղաղաւէտ մըտախորհ, Զակն իմ յառեալ 'ի յասաեղս, որ զբոյտ պաճնեն պատմուան, Շուրջ գեգերիմ յանդորրու ընդ քո ստուերօք նուբրական:

ՑԸՆՈՒՅՆԻՆ

Արդեօք կը գտնուին մարդիկ, որոնց աստեղազարդ գիշերաց տեսարանը գեղցիկ խորհրդածութեան մը նիւթ չերեայ: Կան այնպիսիներ, որոնք մէյ մը կանկ առած չելլեն 'ի զնին մեր զլխուն վրայ տարածուած ամբաւ լուսափայլ աշխարհաց, ու փնտուած չըլլան արարչագործութեան մեծ գաղտնիքը: Գիշերուան միայնութեան ժամերը իրացընէ մեր ամենէն գեղցիկ ժամերն են, յորս կը նանք մուրերիմ ընտանութիւն մը ընել ընդարձակ և անսահման ընութեան հետ: Հազիւ թէ մթութեան քո զը տիեզերաց վրայ պատել կ'սկսի և ահա ցորեկուան լցուը կ'սկսի խաւարիլ.

դոր արևել միջնորդտին մէջ կը տարած։ ծէ : Յորեկուան աստղը կը ծածկէ մեր աչքէն երկնքի այն հրաշալի տեսարանը որ գիշերը միայն մեր աչքին դիմացը կը բացուի : կէս գիշերուան տեսները , կ'ըսէ լորտ Պայրն , երկնից կամարը աստղներով զարդարուած է , որոնք կարծես թէ լուսեղէն կղղիներ են մեր գլխուն վրայ կախուած ովկիանոսին մէջ : Ո՞վ կրնայ անոնց վրայ նայելէն եաքը աչքը երկրիս վրայ դարձնել առնց ամենեին տիսուր ցաւ մը զգալու և փափագելու թեներ ունենալ որով և կարենայ թուչիլ ու խառնուիլ անոնց գեղեցիկ պայծառութեանը հետ :

Միթութեան ատեն աչքերնիս ազատ կերպով կը վերնան դէպ'ի երկինք՝ ճոխ կամարին մուլժ կապոյտէն ալ անդին գիտելով , որուն վրայ աստղները կը շողշողնեն : կը նայինք համաստեղութեանց սպիտակ գաւառներուն , և աչքերնիս կը պտըտցնենք հեռաւոր աշխարհքներու վրայ , ուր որ ամենէն փայլուն աստղներն ալ պայծառութիւննին կը կորսնցնեն իրենց հեռաւորութեր պատճառաւ . աչքերնուս տեսութիւնը ասխելքէ մոքք վեր ընդարձակութենէն ալ անդին անցնելով , աւելի բարձր տեղուանք կը հասնի , ինչուան այն միգամածներուն , որոնց տարածուած լոյսը կարծես թէ տեսանելեաց սահմանը կ'որոշէ : Տեսութեան այս ընդարձակ ճամբարդութեան միջոց , միտքն ալ երագ թեերով կ'ընկերէ տեսողութեան յառաջընթաց շառաւղին՝ թուշելով և խոկալով զարմացմամբ այս հեռաւոր նշոյներուն վրայ : Երկնից կամարին յստակութիւնը կ'արթընցընէ ՚ի մեզ այն սրտի անձուկը , որ մեր հոգւոյն խորերը կը բնակի , և ահա ան տեսնը հազարաւոր հարցմունքներ կը ծնանին մեր մոքին մէջ տեսակ տեսակ մոտածութիւններ դիմացնիս ելլելով : Ստեղծագործութեան առաջնակ մեծ մէն է : Աստեղաբաշխութիւնը նոյնպէս ընդպարձակ գլխութիւն մըն է , վասն զի բոլոր արարածք այս գիտութեան մէջ կը պարունակուին : Ուրեմն

տեսնալով երկնից մեր վրայ ըրած այս տպաւորութիւնները , միթէ չենք ըսեր որ մարդս դեռ արժանի չէ գիտութեան պսակը իր ճակտին վրայ ընդունելու , քանի որ դեռ այնչափ չզարմանար աստեղազարդ պայծառութեան նկարքին վրայ : Գիշերը իրաւցնէ միայնութեան ատեն մըն է , որուն ընդհանուր խաղաղութեանը ժամանակ խոհական հոգին կը զգաստանայ , ինք իրեն կու գայ , ետ կը քաշուի աշխարհքիս խարեբայ կեանքէն և կ'սկսի մոտերիմ ընտանութիւն մը ընել բնութեան և ճշմարտութեան հետ :

Այն անձը որ կեւտոնի լեզուով Գիշերները երգեց , (Եղուարդ Եռունկ) երբեմն երբեմն հրաշալի մոտածութիւններ ունեցած է : « Ո՞վ վսեմ գիշեր , կ'աղաղակէր , տիեզերաց վեհ անդրանիկը , որ ցորեկուան Աստղէն առաջ ծնար և իրմէ ետքն ալ դեռ պիտի ապրիս և որուն մահացրով և անսահք յարգանօք կը նային , ուսկից սկսիմ քու գովեստդ և ուր լմնցնեմ : Քու խաւարամած ճակատդ աստղներով պսակուած է . ամպերը ստուերաց հետ խառնուած և հազարաւոր կերպ կերպ շրջաններով ծալք ծալք եղած՝ քու լուսափայլ զգեստուդ երկայն բանուածքը կը ձևացնեն , որ քու հետոցդ վրայ կը ծածանի և կապուտակ երկնից եղերքը կը տարածուի : Ո՞վ գիշեր , քու մթաստուեր երկայնութեամբդ՝ աւելի շքեղ ու սրտառուչ է բնութիւնը : Իսմ երախստագէտ մնուայիս տողերն ալ քու արդինքդ են : Ո՞հ , ամեն նիւթերէն աւելի ասիկա արժանի չէ մի տաղերգութեան : Ուրիշ ինչ լաւագոյն փորձ մը կայ որով երկնային երջաննկութեան զմայլման ճաշակը կարենանք տալ մեր մոտացը : Ցաւիտենականն ԱԾ որոշած ըլլալով որ իր լուսափիւու երեսաց փառքը մարդուս ցուցընէ , մօտիկ անոր աչքին դիմացը դրաւ այս հրաշալեաց տեսարանը , որպէս զի վարժի մեծ մեծ բաներ տեսնալու : ... Երկրէս վեր կը վերցնեմ միտքս ... ինչ պիսի պերճ երեսըթ . ինչ առատութիւն հրաշալեաց . ինչպիսի ճոխութիւն և

փառք տարածեր է Արարիչը այս թա-
տրոնիս վրայ: Ո՞ր ազգին տեսութիւնը
կրնայ համնիլ անոր ընդարձակութեա-
նը: Ի՞նչ անծանօթ հնարջ մը կայ ար-
դեօք որ կը յափշտակէ գչողին և ան-
վերջանալի դիւթութեամբ մը կը սիրցը-
նէ անոր այս տեսարանը և կը ստիպէ
անդադար անոր նայել: Յորեկը մէջ արև
մը ունի, իսկ գիշերը խիստ շատ արե-
ներ, որոնց պայծառութիւնը առաջ-
նորդ կ'ըլլայ մեր աշացը ու անսահման
ճամբաներէ անցընելով, յորս Յաւի-
տենականին մեծազօր կարողութեան
նշանը դրոշմեալ է, կը հասցնէ ինչուան
անոր ծոցը: Ինչպիսի կրակի հեղեղներ
հաստատութեան ծայրը կեցած այն սա-
փորներէն կը փաղեն ու մէկտեղ վար
կը թափին: Ահա կ'ելլամ կը բարձրա-
նամ ու կը խառնուիմ այն փոշովն մէջ
ու երկինք կը յափշտակուիմ: Ո՞հ, թո-
ղուցէք որ տեսնեմ... թողուցէք որ
լաւ մը խորհրդածեմ: ... Բայց աչքիս
երեցածները վերջ չունին, և մտածու-
թիւններս ամպայութեան մը մէջ մոլո-
րեր են: Երևակայութեանս թուիչը կը
յոգնին, և դեռ կ'ուզէ նորէն զօրանալ:
չկրնար ոչ դէմ զնել զինքը յառաջե-
լու ստիպող հրապուրանաց, և ոչ ալ
համնիլ իրմէ փախչող անծայր տիեզե-
րաց. այսչափ մեծ է երևակայութեան
բարիքը, այսչափ երկայն է իրեն ճամ-
բրդութիւնը: ... Ո՞հ փառասիրութի,
դեռ կը պարծին ուրեմն այս մեր բնա-
կած երկրին վրայ ըրած աշխարհակա-
լութեանցդ ընդարձակութեանը վրա-
յօք »:

Ամեն գիտութիւններէն աւելի աս-
տեղաբաշխութիւնը կրնայ մեզի իմա-
ցընել մեր փոքրկութիւնը, և ճանչցը-
նել դարձեալ այն յարաբերութիւննե-
րը, որոնք զերկիրս ստեղծագործու-
թեան մնացած մասին հետ կը միացը-
նեն: Առանց այս գիտութեան, ինչպէս
առջի դարերուն պատմութիւնը կը վը-
կայէ, անկարելի է գիտնալ ոչ ուր, ոչ
ով ըլլալիս, և ոչ ալ կրնանք միջոցին
և ամբողջ տիեզերաց մէջ մեր բռնած
տեղւոյն վրայ կը մեծնալ ամենը մէկտեղ տիեզերը
կը ձևացնեն :

Թիւն մը հաստատել: Առանց այս գի-
տութեան չենք կրնար գիտնալ մեր
հայրենեաց տարածութեան ստոյգ չա-
փը, իր բնուկթիւնը և իրեն պատշաճ օ-
րէնքը: Մենք տգիտութեան մթիւն խան-
ձարրոց մէջ փակուած, աշխարհքիս
զիսաւոր հանգամանացը վրայ պղոտիկ
գաղափար մ'ալ չենք կրնար ստանալ:
Թանձը մառախուղ մը պատած է մեր
չորս կողմը գծուած հորիզոնին վրայ,
ու մոփերնիս առանց խորհրդածելու կը
կենայ, ու չկրնար կենաց ամենօրեայ
տեսարանէն աւելի վեր ելել ու անդին
անցնիլ այն նեղ պարունակէն, որ մեր
տեսութեան վերջին սահմանն է: Բնդ
հակառակն երբոր տիեզերագիտութե-
ջահիւը կը լրաւալորովինք, տեսարանը
կը փոխուի, ու հորիզոնը մթագնող շա-
մանդաշները ցրուելով, աչքերնուա դի-
մաց ամեն բան կը բացուի ու կը նայինք
երկնից վճիտ պարզութեան վրայ, որ
Արարշապետին մեծագործութիւնն է:
Կ'երեայ որ երկիրս ճօնուն գունտի մը
պէս մեր ոտքին տակը կը շարժի. և ա-
նոր պէս բիւրաւոր գունտեր եթերին
մէջ կը թաւալին: Որչափ որ մեր տե-
սողութեան կարողութիւնը աճի, նոյն
չափ ալ աշխարհքս կը մեծնայ, ալ ան-
կէ ետքը բոլոր արարշագործութիւնը
մեր դիմացը կը բացուի իրեն դոյցառ-
թիւններովը հանդերձ, ու միանգա-
մայն կ'որոշէ մեր երկրագնտոյն ունե-
ցած դիրքն ու համեմատութիւնը՝ մէ-
կալ աշխարհքներուն բազմութեանը
հետ, որոնք ամենը մէկտեղ տիեզերը
կը ձևացնեն :

Գիշեր ատեն միայն պէտք է որ փըն-
տունք այս տեսարանը, զգիշերը պէտք
է կանչել սրբազն բանաստեղծից հետ
մէկտեղ, որոնց քնարը կրնայ երգել
այն հրաշալիքը: